

«2016Թ. ԳՅ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 7-ՐԴ ՇՐՋԱՆԻ

II ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԸ

«2016 թվականի ԳՅ լավագույն հաշվապահ» մրցույթի 12-րդ փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի բոլոր հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում մասնակիցը ընդհանուր հաշվով կվաստակի 10 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից, որի ճիշտ պատասխանը գնահատվում է 5 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների թիվը կազմում է 15 միավոր:

Ստորև ներկայացվող հարցաշարի և խնդրի պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2016 թվականի մայիսի 24-ը: Հարցաշարի և խնդրի ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2016 թվականի մայիսի 25-ին:

ՈՒՇԱՂՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիր, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշան և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2017 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

«2016Թ. ԳՅ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 7-ՐԴ ՇՐՋԱՆԻ

II ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ՝

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ

- Նշվածներից որը չի համարվում որպես ակտիվների՝ գնահատման (չափման) հիմունք՝**
 - սկզբնական արժեք.
 - ընթացիկ (վերականգման) արժեք.
 - օգտագործման արժեք.
 - իրացման (մարման) արժեք:
- Համաձայն հետևողականության սկզբունքի, կազմակերպությունը մի ժամանակաշրջանից մյուսը, որ դեպքում կարող է փոփոխել հաշվապահական հաշվառման քաղաքականությունը**
 - կարող է ազատորեն փոփոխել իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը.
 - կարող է փոփոխել իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այդ ին հարկային տեսչությանը նախօրոք տեղյակ պահելուց հետո.
 - ընդհանրապես չի կարող փոփոխել իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը.
 - կարող է փոփոխել իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, երբ կազմակերպության գործառնությունների բնույթում տեղի են ունենում էական փոփոխություններ:
- Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար որն է հանդիսանում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն.**
 - ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը և դրանց համար գանձվող մաքսատուրքը.

բ. ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը, դրանց համար գանձվող մաքսատուրքերը և մաքսային վճարները.

գ. ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը, դրանց համար գանձվող ակցիզային հարկի գումարը և մաքսատուրքերը.

դ. ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը և դրանց համար գանձվող ակցիզային հարկի գումարը:

4. Ինչպես պետք է ճանաչվեն չկուտակվող փոխհատուցումների գծով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները՝

ա. բացակայությունների տեղի ունենալու ժամանակ.

բ. հաշվեգրվեն աշխատակիցների կողմից ծառայությունների մատուցմանը (աշխատելուն) զուգընթաց.

գ. բացակայությունների տեղի ունենալու կամ աշխատակիցների կողմից ծառայությունների մատուցման ժամանակ՝ կախված կազմակերպության կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականությունից (կախված նրանից, թե կազմակերպությունը այդ գումարների գծով ձևավորում է պահուստ, թե ոչ).

դ. բաշխվեն հավասարաչափ աշխատակիցների ակնկալվող ծառայության ժամանակաշրջանում ակտուարային գնահատականների հիման վրա:

5. Որն է համարվում ակտիվներին վերաբերող պետական շնորհների հիմնական պայմանը շնորհ ստացող կազմակերպության համար

ա. գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ ակտիվներ.

բ. գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ակտիվներ.

գ. գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի կարճաժամկետ ակտիվներ.

դ. վաճառի կամ այլ կերպ օտարի երկարաժամկետ ակտիվներ:

6. Ձեռք բերման պահին ձեռք բերվող կազմակերպության որոշելի ակտիվները և պարտավորությունները ձեռք բերողի մոտ ինչ արժեքով պետք է ճանաչվեն՝

ա. նախքան ձեռք բերումը դրանց հաշվեկշռային արժեքով.

բ. ձեռք բերման պահին դրանց իրական արժեքով.

գ. նախքան ձեռք բերումը դրանց հաշվեկշռային արժեքից և ձեռք բերման պահին դրանց իրացման զուտ արժեքից նվազագույնով.

դ. նախքան ձեռք բերումը դրանց հաշվեկշռային արժեքից և ձեռք բերման պահին դրանց իրական արժեքից նվազագույնով:

7. Հիմնական միջոցները վերագնահատումից արժեքի աճը, որը ներառվել էր սեփական կապիտալում, հետագայում պետք է՝

ա. այդ հիմնական միջոցների դուրսգրման ժամանակ (կամ մաշվածությանը համամասնորեն) ճանաչվի որպես եկամուտ.

բ. այդ հիմնական միջոցների դուրս գրման ժամանակ (կամ մաշվածությանը համամասնորեն) վերագրվի չբաշխված շահույթին.

գ. հակադարձվի այդ հիմնական միջոցների դուրս գրման ժամանակ (կամ մաշվածությանը համամասնորեն)։

դ. այդ գումարը հետագայում չպետք է վերադասակարգվի սեփական կապիտալի այլ հոդվածներում կամ դուրս գրվի։

8. Երբ է ապրանքի արգելադրման մասին որոշումն ուժը կորցրած ճանաչվում՝

ա. արգելադրման համար հիմք հանդիսացած խախտման համար սահմանված տուգանքի գումարն ամբողջությամբ վճարելու պահից.

բ. արգելադրման համար հիմք հանդիսացած խախտման համար սահմանված տուգանքի գումարի գծով մասնակի վճարում կատարելու պահից.

գ. միայն դատարանի օրինակ ուժի մեջ մտնող վճռից հետո.

9. Հետագա ժամանակաշրջաններ տեղափոխվող հարկային վնասի գծով հետաձգված հարկի գումարների արտացոլում.

ա) Դեբետ 151 «Հետաձգված հարկային ակտիվ».

Կրեդիտ 751 «Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)».

բ) Դեբետ 261 «Ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով»

Կրեդիտ 343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)».

գ) Դեբետ 225 «Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով»

Կրեդիտ 751 «Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)»:

10. Ավտոմեքենայի ձեռք բերման ժամանակ վճարված մաքսատուրքի արտացոլում.

ա) Դեբետ 713 «Գործառնական այլ ծախսեր»

Կրեդիտ 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին».

բ) Դեբետ 821 «Հիմնական միջոցների կառուցման (ստեղծման) ծախսումներ»

Կրեդիտ 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին»:

գ) Դեբետ 111 «Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ»

Կրեդիտ 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին».

«2016Թ. ՀՀ ԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 7-ՐԴ ՇՐՋԱՆԻ

II ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԽՆԴԻՐԸ՝

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ

«X» ՍՊԸ-ն հանդիսանում է ԱԱՀ վճարող առևտրային ընկերություն: Ընկերության համար ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանն է ամիսը:

2015թ. ապրիլ ամսին ընկերության կողմից իրականացվել են հետևյալ գործառնությունները.

1. Ապրանքների ներմուծում ՀՀ տարածք

ա) ապրիլի 15-ին (այդ նույն ամսում կնքված գործարքի շրջանակներում) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ԵՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք են ներմուծվել ապրանքներ, որոնց միջև ապրանքների մատակարարման պայմանագիր կնքվել է ապրիլի 1-ին: Ապրանքների պայմանագրային արժեքը կազմել՝ 2,600 հազ. ռուսական RUB¹: Նշված ապրանքների փոխադրման համար ընկերության կողմից կատարվել է 3,300 հազ. դրամի ծախս, որից մինչև ՀՀ պետական սահմանը ապրանքների տեղափոխման համար կատարված ծախսը կազմել է 2,900 հազ. դրամ: Ընկերությունը ապրանքների ներմուծման հետ կապված այլ ծախսեր չի կատարել: Ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի գումարը ընկերությունը հաշվարկել և վճարել է 2015թ. մայիսի 6-ին:

բ) 7,200 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ ապրանքներ (ներառյալ ԱԱՀ-ն) ձեռք են բերվել ԱԱՀ վճարող հանդիսացող անձից, որի դիմաց 2015թ. փետրվար ամսին մատակարարի բանկային հաշվին փոխանցմամբ կանխավճար էր վճարվել 5,400 հազ. դրամ, 600 հազ. դրամ վճարվել էր ապրանքի ստացման օրը, իսկ մնացած մասը՝ ապրիլ ամսին:

գ) ՀՀ տարածքում ՀՀ-ում գրանցված կազմակերպությունից վարձակալված անշարժ գույքի դիմաց, համաձայն վերջինիս կողմից դուրս գրված հարկային հաշվի, վճարել է մարտ ամսվա համար նոտարական վավերացում չունեցող ձևով կնքված պայմանագրով նախատեսված վարձավճարը՝ 1200 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

դ) 20,000 հազ. դրամ արժողությամբ ապրանքներ (առանց ԱԱՀ) իրացվել են ՀՀ-ում մեծածախ առևտուր կազմակերպելու միջոցով:

ե) Հաշվետու ժամանակաշրջանում հրապարակային պայմանագրի համաձայն մանրածախ առևտրի միջոցով իրացրել է ապրանքներ՝ 18,000 հազ. դրամ հատուցման արժեքով, ինչը կազմում է այդ ապրանքների սովորաբար կիրառվող գնի 70%-ը: Ընկերությունը հարկային մարմիններին առևտրային զեղչեր կիրառելու վերաբերյալ հայտարարություն չի ներկայացրել:

Պահանջվում է՝

«X» ՍՊԸ-ի կողմից 2015 ապրիլ ամսում կատարած՝ վերոնշյալ գործառնությունների հիման վրա որոշել բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը (կամ գերավճարի գումարը, եթե այն առաջանում է) և լրացնել այդ նույն հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկը հազար դրամներով (հաշվարկի ձևը կցվում է): (Ընկերությունը գործունեությունն իրականացնում է իր իրավաբանական հասցեում՝ ՀՀ, ք. Երևան 0010, Շիրազի 61, ՀՎՀՀ 00122539):

¹ ՀՀ արտարժույթային շուկաներում մեկ RUB-ի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը կազմել է՝ 2015թ. ապրիլի 1-ին՝ 9 դրամ, 2015թ. ապրիլի 15-ին՝ 10 դրամ:

Պատասխան

Ա. Տող 15 Ա $2,600 \cdot 10 + 2,900 = 28,900$

Տող 15 Բ $28,900 \cdot 20\% = 5,780$

Տող 16.1 Բ 5,780 Համաձայն ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների

Բ. Տող 16 Ա $7,200 - 1,200 = 6000$

Տող 16 Բ $7200 / 6 = 1,200$

Տող 16.1Բ $(7200 - 5,400 - 600) / 6 = 200$ Համաձայն ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի

Գ. Տող 16 Ա $1200 - 200 = 1000$

Տող 16 Բ $1200 / 6 = 200$

Տող 16.2Բ 200 Համաձայն ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի դրույթների

Դ. Տող 11 Ա 20,000

Տող 11 Բ $20,000 \cdot 20\% = 4,000$

Ե. Տող 12 Ա 18,000

Տող 12 Բ $18,000 \cdot 16.67\% = 3,000$

Տող 13 Բ $18,000 / 0,7 \cdot 80\% = 20,571 \cdot 16.67\% = 3,429$

$3,429 - 3,000 = 429$

Բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը կազմում է 6429 դրամ: